

Խ-894⁹-06.05.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրաքվեի մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-155-Ն սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ մասը լրացնել նոր՝ 12-րդ կետով.

«12) Հանրապետության նախագահին:»:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հիմնադրամի միջոցները հավաքվում են Երևանում և Հանրապետության բոլոր մարզերում մասնաձյուղ ունեցող որևէ առևտրային բանկում հիմնադրամ ձևավորելու նպատակով քարոզչության կողմի լիազոր ներկայացուցչի դիմումի հիման վրա այդպիսի առևտրային բանկում բացված ժամանակավոր հատուկ հաշվեհամարներին»:

2) 2-րդ մասը լրացնել նոր՝ երրորդ նախադասությամբ.

«Երևանում և Հանրապետության բոլոր մարզերում մասնաձյուղ ունեցող առևտրային բանկերի ցանկը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրում է Կենտրոնական բանկը»:

3) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Հիմնադրամը ձևավորվում է հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց, կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների նվիրատվություններից»:

4) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Հիմնադրամին նվիրատվություններ չեն թույլատրվում՝

1) օտարերկրյա պետություններից,

2) ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից, այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունների,

3) պետական և համայնքային բյուջեներից և (կամ) արտաբյուջետային միջոցներից,

4) պետական և համայնքային կազմակերպություններից, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններից,

5) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանցից,

6) անանուն անձանցից»:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) վերնագրում «մուծումներ» բառը փոխարինել «նվիրատվություն» բառով,

2) 1-ին մասում «մուծումների» բառը փոխարինել «նվիրատվությունների» բառով,

3) 1-ին մասի երրորդ նախադասությունում «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» բառերով,

4) 1.1-ին մասի առաջին պարբերության երկրորդ նախադասությունում «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը» բառերով,

5) 1.1-ին մասի երկրորդ պարբերությունում «մուծումների» բառը փոխարինել «նվիրատվությունների» բառով,

6) 2-րդ մասի առաջին նախադասությունում «կամավոր մուծում» բառերը փոխարինել «նվիրատվություն» բառով,

7) 3-րդ մասում «մուծած գումարները» բառերը փոխարինել «կատարած նվիրատվությունները» բառերով, իսկ «մուծումները» բառը փոխարինել «նվիրատվությունները» բառով,

8) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Այն բանկերը, որտեղ բացված են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ, եռօրյա պարբերականությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տեղեկանք են ներկայացնում հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ»:

9) 7-րդ մասում «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը» բառերով,

10) 8-րդ մասում «Կենտրոնական ընտրական հանձնաժողովին» բառերը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին» բառերով:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ կետերը, 8-րդ կետը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերաբերելի մասով, 9-րդ և 10-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից: